

Կոկորդըս մի՛ թողուք բնութեան խընկաւետ  
 Կաթն՝ որ Աստուած է կըթեր,  
 Երբ կը խըմեմ, դըրած կըզակս հոր՛զոնին,  
 Երկընքի լայն դաշխուրանէն բոց գինին,  
 Բերք աստղերու ողկոյզին,  
 Ո՛հ, մի ընէք ձեր խօսքերովը լեղի՛  
 Այդ վերացնող սուրբ ըմպելին ժանտ լեղի.  
 Շըրթունքներս հո՛ն կը սուզին:  
 Երբոր սըրտիս ըսկիհին մէջ լեցուցած  
 Ճառագայթներ եւ ծաղիկներ եւ Աստուած  
 Ովկիանոսներ, հերոսներ,  
 Երբ այդ տիտան տարըրներով կը շաղուեմ  
 Մարդուն համար Օրհնըւած հացը վըսեմ,  
 Մի խորտակէք, անգութներ՛ր,  
 Սեղանիս վրայ սըրտէ սկիհն այդ լեցուած՝  
 Տակաւին, ո՛հ, առէք կերէ՛ք մ՛իսկ չըսած:  
 Թողէք աստղե՛րը ափեմ:  
 Կարկնիս մէկ ծայրն հաստատեցի կորովով  
 Յաւերժօրէն խաչուած Սերին վրայ՝ միւսով,  
 Որպէսզի Մա՛րդը չափեմ:  
 Մի՛ վերցընէք - այդ արարք մ՛է անպիտան -  
 Անոր դողդոջ մէկ սըլաքէն Գողգոթան  
 Միւս սըլաքէն Մարդկութիւնն:  
 Այսպէս, արփւոյն տակ, Աստուծոյ յանդիման,  
 Ըրած Բնութիւնն ինձ մայր, Անհունն՝ օրօրան,  
 Թողէ՛ք, թողէ՛ք զիս խոկուն: